



## ԼՈՒՍԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

### ԻՐԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ ԵՎ ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարևորելով ՀՀ արտաքին առևտրում առկա հիմնախնդիրների լուծման հրատապությունը՝ հողվածում վերլուծվել են հանրապետության արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, արտահանման և ներմուծման նկարագիրը ըստ երկրների: Առևտրային հաշվեկշռի առավել ընդգրկուն վերլուծության համար հաշվարկվել են արտահանման և ներմուծման չափաբաժինները, դրանց միջին քառակուսային շեղումները, արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի համաչափության և անհաշվեկշռվածության գործակիցները: Հաշվի առնելով, որ արտահանման մեծ բաժինը և որակական մասը ապահովում են մի քանի ապրանքախմբեր՝ գնահատվել է դրանց վրա իրական փոխարժեքի՝ որպես գնային գործոնի ազդեցության չափը:


**Հիմնաբառեր.** *իրական փոխարժեք, իրական արդյունավետ փոխարժեք, արտահանման կառուցվածք, ներմուծման կառուցվածք, ապրանքների հաշիվ, ծառայությունների հաշիվ*

ՀՀ արտաքին առևտրում առկա են հիմնախնդիրներ՝ կապված արտահանվող և ներմուծվող ապրանքների ծավալների, ապրանքախմբերի կենտրոնացվածության աստիճանի հետ, սակայն գերխնդիր է ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի, մասնավորապես՝ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը, որը պետության արտաքին պարտքի աճի պատճառ է, ինչն էլ, իր հերթին, կախվածություն է ենթադրում արտաքին աշխարհից:

Վիճակագրական տվյալները<sup>1</sup> փաստում են, որ ընթացիկ հաշվի պակասուրդը մինչև 1998 թ. աճել է, որից հետո՝ մինչև 2004 թ. նվազել, այնուհետև ընթացիկ հաշվի պակասուրդն աճել է: Մասնավորապես, պակասուրդի

<sup>1</sup> Աղբյուրը՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

ամենամեծ հավելածը՝ 217.3%, գրանցվել է 2007 թ., ամենամեծ պակասուրդն արձանագրվել է 2008 թ.՝ կազմելով 1745.7 մլն ԱՄՆ դոլար, որը հիմնականում պայմանավորված է եղել նախորդ տարվա նկատմամբ առևտրային հաշվեկշռի պակասուրդի 60% աճով: 2008 թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատվել է: 2009 թ., ճգնաժամի խորացմանը զուգահեռ, ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատությամբ կրճատվել է 23%-ով, արտահանումը նվազել է 22.4%-ով, իսկ ներմուծումը՝ 23.1%-ով: Արդյունքում՝ 2009 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է՝ կազմելով ՀՆԱ 18%-ը:



**Գծապատկեր 1. Ընթացիկ հաշվի պակասուրդի միտումը 1993–2017 թթ.**


Ինչպես հետխորհրդային մի շարք երկրներում, ՀՀ-ում ևս, 2010 թվականից սկսած, համաշխարհային, ինչպես նաև ՀՀ տնտեսության վերականգնմանը զուգընթաց, արտաքին առևտրի ցուցանիշները փոքր-ինչ բարելավվել են: Այսպես՝ 2013 թ. տեղի է ունեցել արտահանման և ներմուծման դոլարային ծավալների աճ: Ըստ որում, արտահանումն աճել է 7%-ով, ներմուծումը՝ 3%-ով: 2013 թ. ՀՀ արտաքին առևտրի շրջանառությունը հասել է 7.67 մլրդ դոլարի՝ 4.1%-ով գերազանցելով 2012 թ. ցուցանիշը: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 2.2 մլրդ դոլար: 2014 թ. ՀՀ արտաքին առևտրի շրջանառությունը հասել է 8.76 մլրդ դոլարի՝ 14.2%-ով գերազանցելով 2013 թ. ցուցանիշը: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2.17 մլրդ դոլար է:

ՀՀ ներմուծման բացարձակ ծավալները ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում մշտապես գերազանցել են արտահանման ծավալները, ինչի արդյունքում առևտրային հաշվեկշիռն ունի բացասական մնացորդ: Ներմուծում-արտահանում հարաբերության ամենամեծ ցուցանիշը արձանագրվել է 1997 թ.՝ կազմելով 2.9, այնուհետև հարաբերակցությունը մինչև 2006 թ. իջել է՝ 2005-ին կազմելով 1.54, 2006–2008 թթ. աճել է՝ գրեթե հասնելով 1997 թ. մակարդակին: 2010-ից հարաբերակցությունն իջել է, և 2013-ին ներմուծումը գերազանցել է արտահանումը 1.8 անգամ, 2014-ին՝ 1.7 անգամ:

Դիտարկվող ժամանակահատվածում մշտապես արձանագրվել է արտահանման և ներմուծման ծավալների աճ, բացառությամբ 1997 թ., երբ ապրանքների և ծառայությունների արտահանումը կրճատվել է 9%-ով, 1999 թ., երբ ներմուծումը կրճատվել է 10%-ով, 2008-ին արտահանումը կրճատվել է 2%-ով: 2009 թ. արտահանումը նվազել է 22%-ով, ներմուծումը՝ 23%-ով: Դիտարկվող ժամանակահատվածում արտահանման աճի տեմպը հիմնական-

նում գերազանցել է ներմուծման աճի տեմպը: 2000–2005 թթ. արտահանումը միջինում աճել է 25%-ով, իսկ ներմուծումը՝ 16%-ով: 2006–2008 թթ. ներմուծման աճի տեմպը արագացել է՝ նշված ժամանակահատվածում բնակչության եկամուտների շարունակական աճով և դրամի արժեւորմամբ պայմանավորված: Չնայած ազգային արժույթի արժեզրկմանը, 2009 թ. արտահանման ծավալները կրճատվել են 22.4%-ով, իսկ ներմուծմանը՝ 23.1%-ով՝ պայմանավորված արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակային խզմամբ: Վերլուծվող ժամանակահատվածում, նախորդ տարվա համեմատությամբ, ներմուծման աճի բարձր տեմպ արձանագրվել է 2007 թ., իսկ արտահանման ամենամեծ աճի տեմպ՝ 2010-ին: 2010 թ. արտահանման ծավալները աճել են 45%-ով, իսկ ներմուծմանը՝ 14%-ով, որը բացատրվում է համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանվող ապրանքների գնային մրցունակության բարձրացմամբ, ինչպես նաև նախորդ տարիներին Կառավարության հակաճգնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերած օժանդակությամբ: 2011 թ. արտահանման ծավալներն աճել են 25%-ով, ներմուծման ծավալները՝ 8%-ով, իսկ 2012 թ. արտահանումն աճել է 3.5%-ով, ներմուծումը՝ 2%-ով: Համաշխարհային տնտեսությունում պահանջարկի վերականգնման և արտահանողներին ցուցաբերած օժանդակության շնորհիվ 2013 թ. արտահանման աճման միտումը պահպանվել է, և նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 7%, ներմուծումը՝ 2,6%<sup>2</sup>:

Նշված փոփոխությունների հետ կապված՝ 2010–2014 թթ. ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալդոն կրճատվել է՝ արտահանման 19% և ներմուծման 7% միջին աճի պայմաններում: 2010-ից սկսած՝ արտահանման աճի տեմպերը մշտապես գերազանցել են ներմուծման աճի տեմպերը՝ հնարավորություն ընձեռելով աստիճանաբար մեղմացնելու առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը:




**Պատկեր 2. Ապրանքների հաշվի շարժը և պակասուրդի միտումը 1993–2017 թթ.**

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 253:

Ապրանքների և ծառայությունների հաշվում, դիտարկվող ժամանակահատվածում, ապրանքների հաշվի տեսակարար կշիռը միջինում կազմել է 86%, ծառայությունների հաշվինը՝ 14%: Ապրանքների և ծառայությունների հաշվի կառուցվածքի փոփոխությունները հստակ օրինաչափություն չեն դրսևորել, սակայն հետձգնաժամային 2009 թ. մինչև 2014 թ. ծառայությունների հաշվի բաժինը կտրուկ նվազել է և 2014-ին հասել 5%-ի:

Ապրանքների և ծառայությունների արտահանման կառուցվածքում, որոշակի վայրկյաններով, արձանագրվել է ապրանքների տեսակարար կշռի նվազման միտում: Այսպես՝ եթե 1994 թ. ապրանքների արտահանումը կազմել է 94%, ծառայություններինը՝ 6%, ապա 2014-ին, համապատասխանաբար՝ 50.5% և 49.5%: 2014 թ. արձանագրվել է ապրանքների տեսակարար կշռի ամենացածր մակարդակը: Դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների արտահանման կառուցվածքում ապրանքների տեսակարար կշիռը կազմել է 69%, ծառայություններինը՝ 31%:




**Գծապատկեր 3. Ծառայությունների հաշվի շարժընթացը և պակասուրդի միտումը 1993–2017 թթ.**

Ի տարբերություն նախորդի, ապրանքների և ծառայությունների ներմուծման կառուցվածքը էական փոփոխություններ չի կրել: Չնայած ներմուծման կառուցվածքում ապրանքների տեսակարար կշռի նվազմանը, այս ցուցանիշը մեծ է միջինում՝ 78%, ծառայությունների ոլորտում՝ 22%: Վերջինիս բնագավառում ամենամեծ տեսակարար կշիռ արձանագրվել է 1995-ին՝ 90%, ամենափոքրը 2014-ին՝ 68%:

Էական տեղաշարժեր են արձանագրվել ծառայությունների արտահանման և ներմուծման կառուցվածքներում:


2001 թ. ծառայությունների արտահանման կառուցվածքում տրանսպորտային ծառայությունների տեսակարար կշիռը զգալի նվազել է, չնայած դիտարկվող ժամանակահատվածում այս ոլորտի արտահանման աճի միջին տեմպը կազմել է 28%: Հատկապես կտրուկ աճ է արձանագրվել 1995–1996 թթ.: Նշված ժամանակահատվածում ամենափոքր տեսակարար կշիռը արձանագրվել է 2014 թ.՝ 11%, ամենամեծ տեսակարար կշիռը 1995 թ. և 1997 թ.՝ 50%:



**Քճապատկեր 4. Ծառայությունների արտահանման կառուցվածքի փոփոխությունները 1993–2014 թթ.**

Հեռահաղորդակցության տեսակարար կշիռը 1993 թ. 98%-ից իջել և ներկայումս կազմում է 8%: Այդ ծառայությունների արտահանումը, դրսևորելով փոփոխությունների անկայուն վարքագիծ, աճել է միջինում 10%-ով:

Արտահանման կառուցվածքում ճամփորդական ծառայությունները միջինում ունեն 35% տեսակարար կշիռ, սակայն այդ ծառայությունների 41% աճի միջին տեմպի պայմաններում 2014-ին արձանագրվել է 60% ցուցանիշ: Շինարարական ծառայությունները միջինում ունեն 4% տեսակարար կշիռ, սակայն պետք է փաստել, որ արտահանման ծավալների անկայուն փոփոխության պայմաններում արձանագրվել է տեսակարար կշռի կտրուկ ավելացում՝ 2010-ի 1%-ից 2013 թ. աճելով մինչև 20%-ի: 2014 թ. այդ ցուցանիշը կազմել է 13%: Այլ ծառայությունները արտահանման կառուցվածքում միջինում 12% են կազմել:



**Քճապատկեր 5. Ծառայությունների ներմուծման կառուցվածքի փոփոխությունները 1993–2014 թթ.**

Ծառայությունների ներմուծման կառուցվածքում նույնպես առկա են փոփոխության որոշակի միտումներ: Այսպես՝ տրանսպորտային ծառայությունների ներմուծման ծավալների միջինում 13% աճի պայմաններում դրանց տեսակարար կշիռը միջինում կազմել է 47%: Արձանագրվել է ցուցանիշի անկման միտում՝ 2014 թ. հասնելով 27%-ի: Հեռահաղորդակցությունը ծառայությունների ներմուծման կառուցվածքում միջինում ունեցել է 3% տեսակարար կշիռ և դիտարկվող ժամանակահատվածում էական փոփոխություններ չի կրել՝ բացառությամբ 1999 թ., թեև միջին աճի տեմպը կազմել է 27%:

Ճամփորդական ծառայությունների ներմուծման՝ միջինում 46% աճի պայմաններում արձանագրվել է աճի միտում. միջինում տեսակարար կշիռը կազմել է 27%, 2014 թ.՝ 60%՝ 1993 թ. 1%-ի փոխարեն: Այլ ծառայություններ ներմուծման կառուցվածքում միջինում ունեցել են 23% տեսակարար կշիռ, արձանագրվել է այդ ցուցանիշի նվազում. 2014 թ. կազմել է 10%:

ՀՀ արտահանման մեջ, 2005 թ. սկսած, մեծ տեսակարար կշիռ են ունեցել՝ 1. ոգելից և ոչ ոգելից ըմպելիք, քացախ, 2. հանքաքար, խարամ, մոխիր, 3. վառելանյութ, նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութ, 4. մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, 5. սև մետաղներ, 6. պղինձ և իրեր դրանից: 2013 թ. բացի նշված ապրանքախմբերից արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել նաև՝ ծխախոտ, ալյումին և իրեր դրանից ապրանքախմբերը: 2014 թ. արտահանման, ինչպես և նախորդ տարիներին ՀՀ-ից արտահանված հիմնական արտադրատեսակը պղնձի հանքաքար և խտահանքն է. արտահանվել է 185 հազ. տոննա պղնձի հանքաքար և խտահանք՝ 236 մլն դոլար ընդհանուր արժողությամբ, ինչը ամբողջ արտահանման 15.7%-ն է կազմել: 2014-ին արտահանվել է 13.1 մլն լիտր սպիրտային խմիչք՝ 165 մլն դոլար ընդհանուր արժեքով և արտահանման կառուցվածքում ունեցել է 11% տեսակարար կշիռ, 2014-ին երկաթահամահալվածքի արտահանումը կազմել է ամբողջ արտահանման 7.3%-ը:

ՀՀ ներմուծման մեջ, 2005 թ. սկսած, մեծ տեսակարար կշիռ են ունեցել՝ 1. վառելանյութ, նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութ, 2. մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, 3. միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ, 4. էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, ծայնագրող ապարատներ, 5. վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր, 6. հացահատիկ: 2013-ին, բացի նշված ապրանքախմբերից, ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել նաև դեղագործական մթերքներ, ինչպես նաև պլաստմասսա և դրանից իրեր ապրանքախմբերը: ՀՀ արտաքին առևտուրը բազմազանեցված չէ ըստ ապրանքախմբերի: ՀՀ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող 1-ին 6 ապրանքախմբերը ընդհանուր արտահանման մեջ 2005 թ. կազմել են 81.5%, 2012-ին՝ 70.8%: Իհարկե, սա դրական երևույթ է, քանի որ առկա է արտահանման բազմազանեցում: Սակայն ավելի արագ տեմպերով պետք է փորձել բազմազանեցնել արտահանումն ըստ ապրանքատեսակների՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնելով 1. տեքստիլ հագուստ և հարակից իրեր, 2. դեղագործական մթերք, 3. ծխախոտ, 4. ալյումին և իրեր դրանից, 5. ժամացույցներ և դրանց մասեր, 6. էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, 7. միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ, 8. ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանից ապրանքախմբերի արտահանման ծավալների մեծացմանը: 2005 թ. ՀՀ ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող 1-ին 6 ապրանքախմբերի ցուցանիշն ընդհանուր արտահանման մեջ կազմել

է 58%, 2012 թ.՝ 51.2%: Ի տարբերություն արտահանման, ներմուծումն ըստ ապրանքախմբերի ավելի բազմազանեցված է:

Արտահանման մեջ 2005–2013 թթ. ամենամեծ տեսակարար կշիռ ունեցել են ԵՄ անդամ երկրները, սակայն եթե 2005–2008 թթ. արտահանման դրական աճ է եղել, ապա 2009 թվականից կտրուկ նվազել է, 2010, 2011 թթ. ցուցանիշը պահպանվել է, իսկ 2012 և 2013 թթ. նորից նկատվել է կտրուկ նվազում: ՀՀ արտահանումն ԱՊՀ երկրներ 2005–2008 թթ. աճել է, 2009–2010 թթ.՝ նվազել, իսկ վերջին տարիներին նկատվում է աճ, և ապագայում էլ ավելի կաճի՝ կապված Մաքսային միությանը ՀՀ անդամակցությամբ: ՀՀ արտահանումը այլ երկրներ 2005-ից նվազել է և իր ամենացածր կետին հասել 2008 թ., որի հիմնական պատճառը ճգնաժամն էր, սակայն 2009-ից կտրուկ աճել է, 2010–2011 թթ. ցուցանիշը պահպանվել է, 2012 թ. կրկին աճել, իսկ 2013 թ. գրեթե հավասարվել ԵՄ անդամ երկրների ապրանքների արտահանման տոկոսային կշիռն, ինչը, իհարկե, դրական երևույթ է: Այլ երկրներ արտահանման մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել Իրանը, Վրաստանը, Կանադան, Շվեյցարիան, Չինաստանը, ԱՄԷ-ը<sup>3</sup>:

2005 թ. ամենամեծ տեսակարար կշիռը ՀՀ արտահանման մեջ ունեցել է Պերմանիան, ապա, ըստ հաջորդականության՝ Նիդեռլանդները, Բելգիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, իսկ վերոնշյալ մնացած երկրների տեսակարար կշիռն այդ թվականին դեռ փոքր է եղել: 2006 թ. գրեթե նույնն է եղել երկրների տեսակարար կշիռն ՀՀ արտահանման մեջ: 2007–2008 թթ. արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող 5 երկրներն են՝ Ռուսաստան, Պերմանիա, Նիդեռլանդներ, Բելգիա, Վրաստան: 2009 թ. ընդհանուր արտահանման մեջ երկրների տեսակարար կշիռների փոփոխություններ են տեղի ունեցել, ինչը կապված էր ճգնաժամի հետ: 2010 թ. Պերմանիան իր տեղը զիջել է Բուլղարիային, իսկ Ռուսաստանը նորից հայտնվել է 1-ին տեղում: 2011–2012 թթ., չնչին փոփոխություններով հանդերձ, հիմնական կառուցվածքը պահպանվել է: 2013 թ. ՀՀ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող 1-ին 9 երկրներն են՝ Ռուսաստան, Բուլղարիա, Բելգիա, Իրան, ԱՄՆ, Վրաստան, Պերմանիա, Չինաստան, Նիդեռլանդներ<sup>4</sup>:

ՀՀ ներմուծման մեջ 2005–2007 թթ. ամենամեծ տեսակարար կշիռ ունեցել են ԵՄ անդամ երկրները, սակայն 2008–2009 թթ. ներմուծումը ԵՄ երկրներից նվազել է, 2010–2011 թթ.՝ աճել, իսկ 2012–2013 թթ. նորից նկատվել է նվազում: ՀՀ ներմուծումն ԱՊՀ երկրներից 2005–2007 թթ. աճել է, 2009 թ.՝ նվազել, 2010-ին՝ աճել, 2011–2013 թթ. շատ մեծ փոփոխությունների չի ենթարկվել, և տեսակարար կշիռն ընդհանուր ներմուծման մեջ տատանվել է 29–31%-ի սահմաններում: ՀՀ ներմուծումն այլ երկրներից 2005 թ. նվազել է՝ իր ամենացածր կետին հասնելով 2007 թ., սակայն 2008 թ. կտրուկ աճել և պահպանել է այդ տեմպերը մինչև 2013 թ.: Այլ երկրների մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել Իրանը, Վրաստանը, Կանադան, Շվեյցարիան, Չինաստանը, Իտալիան<sup>5</sup>:

2005 թ. ամենամեծ տեսակարար կշիռը ՀՀ ներմուծման մեջ ունեցել է Ռուսաստանը, ապա, ըստ հաջորդականության՝ Պերմանիան, Ուկրաինան,

<sup>3</sup> Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ 2008՝ էջ 455-457, 2010՝ էջ 482-484, 2012՝ էջ 468-470, 2014՝ էջ 473-475:

<sup>4</sup> Տես նույն տեղը, 2008՝ էջ 458-459, 2010՝ էջ 485-486, 2012՝ էջ 471-472, 2014՝ էջ 476-477:

<sup>5</sup> Տես նույն տեղը, 2008՝ էջ 455-457, 2010՝ էջ 482-484, 2012՝ էջ 468-470, 2014՝ էջ 473-475:

ԱՄՆ-ը, իսկ վերոնշյալ մնացած երկրների տեսակարար կշիռն այդ թվակա-  
նին դեռ փոքր է եղել: 2006 թ. ՀՀ ներմուծման կառուցվածքը, ըստ երկրների,  
գրեթե չի փոխվել, միայն Ուկրաինան է 4-րդից հայտնվել 2-րդ, իսկ Պերմա-  
նիան՝ 4-րդ տեղում: 2007 թ. ՀՀ ներմուծման մեջ վերոնշյալ երկրներից մեծ  
տեսակարար կշիռ ունեցող 5 երկրներն են եղել Ռուսաստանը, Ուկրաինան,  
Պերմանիան, Չինաստանը, ԱՄՆ-ը: 2008 թ. փոփոխություններ են արձանա-  
գրվել՝ կապված ձգնաժամի հետ, և մինչև 2013 թ. այս ոլորտում մեծ տեսա-  
կարար կշիռ ունեցող երկրներն իրենց դիրքերը պահպանել են. փոփոխու-  
թյուններ են եղել միայն միմյանց նկատմամբ: 2013 թ., ըստ ՀՀ արտահանման  
մեջ տեսակարար կշռի մեծության, երկրների հաջորդականությունը հետևյալն  
է՝ Ռուսաստան, Չինաստան, Պերմանիա, Ուկրաինա, Թուրքիա, Իրան, Իտա-  
լիա, ԱՄՆ<sup>6</sup>:

Մեծ խնդիր է նաև ըստ երկրների ՀՀ արտաքին առևտրի ոչ բազմազա-  
նեցված լինելը: Այսպես՝ եթե 2005 թ. ՀՀ ընդհանուր արտահանման մեջ ամե-  
նամեծ տեսակարար կշիռ ունեցող երկրների 1-ին տասնյակի տեսակարար  
կշիռների գումարը կազմել է ընդհանուր արտահանման 81.6%-ը, ապա  
2012-ին՝ 82.9%, 2013-ին՝ 75.1%: Ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար  
կշիռ ունեցող երկրների 1-ին տասնյակի տեսակարար կշիռների գումարը  
2005-ին կազմել է ընդհանուր ներմուծման 67.4%-ը, 2012 թ.՝ 67.5%, 2013 թ.՝  
60.2%: Այս տարիների ընթացքում թեև կառուցվածքային փոփոխություններ  
եղել են, սակայն, ընդհանուր առումով, բազմազանեցման փոխարեն դիտվել  
է նվազում, բացառությամբ՝ 2013 թ.: Այս խնդրի լուծման նպատակով  
մոտակա ժամանակաշրջանում պետք է արտաքին առևտրաշրջանառության  
ծավալները մեծացնել հատկապես Իտալիայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի,  
Իսրայելի, Հնդկաստանի, Բելգիայի, Բրազիլիայի, Իսպանիայի, Կանադայի,  
ԱՄԷ-ի հետ:

2000–2014 թթ. արտահանման չափաբաժինը միջինում կազմել է 25.3%,  
2014 թ.՝ 30.3%, ներմուծման մասնաբաժինը միջինում՝ 47.5%, 2014 թ.՝  
50.2%: Այս ցուցանիշներն արտացոլում են տնտեսության ծավալները և դրա  
կախվածությունը համաշխարհային տնտեսությունից: Ի դեպ, զարգացած  
տնտեսահամակարգերում արտահանման և ներմուծման չափաբաժինները  
ՀՆԱ-ում փոքր են: Աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում ՀՀ  
դիրքն անկայուն է: Այդ մասին է վկայում ՀՀ արտահանման և ներմուծման  
սահմանաչափերի միջին քառակուսային շեղումների մեծ արժեքը. արտա-  
հանման սահմանաչափի միջին քառակուսային շեղումը 5.74% է, ներմուծման  
սահմանաչափինը՝ 3.85%: Սա փաստում է, որ ելքային ցուցանիշների, հե-  
տևաբար՝ սպասվող արդյունքների տատանողականությունը մեծ է:

Արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի ուսումնասիրության  
արդյունքում կարելի է եզրակացնել, որ մեծ է փոքր ավելացված արժեքով  
արտադրանքի տեսակարար կշիռը: Սա լուրջ հիմնախնդիր է, փաստում է  
տնտեսական համակարգի զարգացման ցածր աստիճանի մասին՝ պահան-  
ջելով հրատապ լուծում: Համաչափության (սիմետրիկության) գործակիցը  
փոքր է 1-ից, որը հիմք է տալիս արձանագրելու, որ արտաքին առևտրաշրջա-  
նառության կառուցվածքը համաչափ չէ, և երկիրը աշխատանքի միջազգային  
բաժանման մեջ միտված է դեպի ռեսուրսարդյունահանող տեխնոլոգիաներ:

<sup>6</sup> Տես նույն տեղը, 2008՝ էջ 460-461, 2010՝ էջ 487-488, 2012՝ էջ 473-474, 2014՝ էջ 478-479:

## Աղյուսակ 1

**Առևտրային հաշվեկշռի վիճակի վերլուծության ցուցանիշների  
փոփոխությունները 2000–2014 թթ.**

| Թվական | Արտահանման մասնաբաժինը (%) | Արտահանման մասնաբաժնի շեղումը միջինից(%) | Ներմուծման մասնաբաժինը (%) | Ներմուծման մասնաբաժնի շեղումը միջինից (%) | Անհաշվեկշռվածության գործակիցը | Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%) |
|--------|----------------------------|------------------------------------------|----------------------------|-------------------------------------------|-------------------------------|-------------------------------------------|
| 2000   | 23.8                       | -1.6                                     | 51.6                       | 4.1                                       | 0.37                          | 15.8                                      |
| 2001   | 26.5                       | 1.2                                      | 51.1                       | 3.6                                       | 0.32                          | 10.4                                      |
| 2002   | 31.5                       | 6.1                                      | 50.8                       | 3.3                                       | 0.24                          | 6.2                                       |
| 2003   | 35.0                       | 9.6                                      | 54.5                       | 7.0                                       | 0.22                          | 6.2                                       |
| 2004   | 31.2                       | 5.9                                      | 49.3                       | 1.8                                       | 0.22                          | 2.2                                       |
| 2005   | 29.8                       | 4.4                                      | 45.7                       | -1.8                                      | 0.21                          | 2.5                                       |
| 2006   | 24.3                       | -1.1                                     | 42.0                       | -5.5                                      | 0.27                          | 3.9                                       |
| 2007   | 19.5                       | -5.8                                     | 41.4                       | -6.1                                      | 0.36                          | 8.5                                       |
| 2008   | 15.1                       | -10.2                                    | 42.7                       | -4.8                                      | 0.48                          | 15.0                                      |
| 2009   | 15.8                       | -9.5                                     | 44.3                       | -3.2                                      | 0.47                          | 17.6                                      |
| 2010   | 21.3                       | -4.0                                     | 47.1                       | -0.4                                      | 0.38                          | 14.2                                      |
| 2011   | 24.3                       | -1.0                                     | 46.4                       | -1.1                                      | 0.31                          | 11.1                                      |
| 2012   | 25.7                       | 0.3                                      | 48.3                       | 0.8                                       | 0.31                          | 11.1                                      |
| 2013   | 26.2                       | 0.8                                      | 47.3                       | -0.2                                      | 0.29                          | 8.0                                       |
| 2014   | 30.3                       | 4.9                                      | 50.2                       | 2.7                                       | 0.25                          | 7.9                                       |

Բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման կառուցվածքում գերակշռում են գիտական սարքավորումները, քիմիական նյութերը, էլեկտրոնիկա-հեռահաղորդակցման արտադրանքը: 2004 թ. ՀՀ-ում գրանցվել է բարձր տեխնոլոգիաների ներմուծման ծավալների կտրուկ աճ, ինչը մասամբ պայմանավորված է հեռահաղորդակցության ոլորտի ինտենսիվ զարգացմամբ: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով բարձր տեխնոլոգիաների ներմուծման ծավալները 2008 թ. նվազել են: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ համակարգիչները, էլեկտրոնիկական և հեռահաղորդակցման պարագաները ՀՀ ներմուծվող բարձր տեխնոլոգիական ապրանքների 70–80%-ն են կազմում, մինչդեռ բարձր տեխնոլոգիական մեքենասարքավորումների բաժինը 2% է: Փաստորեն, նոր տեխնոլոգիաների ներմուծման միջոցով տեղայնացվող նորամուծությունը և արտադրական կարողությունների տեխնոլոգիական նորացման հնարավորությունները սահմանափակ են:

Առևտրային հաշվեկշռի կայունությունը բնութագրող անհաշվեկշռվածության գործակիցը ՀՀ-ում միջինում կազմել է 31%, որը փաստում է, որ տնտեսական զարգացումը՝ հատկապես արտաքին առևտրային բաղկացուցիչը, անկայուն է:

ՀՀ ֆինանսական շուկան ներքին և արտաքին ցնցումներին արձագանքում է փոխարժեքի տատանումներով, ինչն էլ, իր հերթին, առաջացնում է արտահանման և ներմուծման, տրանսֆերտների, եկամուտների և կապիտալի հոսքերի տատանումներ: Իրական արդյունավետ փոխարժեքի և առևտրային հաշվեկշռի կապը հիմնավորելու նպատակով տնտեսաչափական մոդելի օգնությամբ կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն:

**Առևտրային հաշվեկշռի և իրական արդյունավետ փոխարժեքի (ԻԱՓ) կապը  
բնութագրող ռեգրեսիոն հավասարման լուծման արդյունքները<sup>7</sup>**

$$\text{TRADE} = 4.78 \cdot \text{REER}(-1) - 17.6$$

| <i>Dependent Variable: LTRADE_SA</i> |                    |                       |                    |              |
|--------------------------------------|--------------------|-----------------------|--------------------|--------------|
| <i>Variable</i>                      | <i>Coefficient</i> | <i>Std. Error</i>     | <i>t-Statistic</i> | <i>Prob.</i> |
| LREER_SA(-1)                         | 4.787736           | 0.476962              | 10.03798           | 0.0000       |
| C                                    | -17.59959          | 2.267837              | -7.760519          | 0.0000       |
| R-squared                            | 0.593546           | Mean dependent var    |                    | 5.158559     |
| Adjusted R-squared                   | 0.587655           | S.D. dependent var    |                    | 0.702326     |
| S.E. of regression                   | 0.450992           | Akaike info criterion |                    | 1.273031     |
| Sum squared resid                    | 14.03418           | Schwarz criterion     |                    | 1.336768     |
| Log likelihood                       | -43.19259          | Hannan-Quinn criter.  |                    | 1.298377     |
| F-statistic                          | 100.7609           | Durbin-Watson stat    |                    | 0.246037     |
| Prob(F-statistic)                    | 0.000000           |                       |                    |              |

Դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1% աճի (արժևորման) դեպքում առևտրային հաշվեկշռի պակասուրդը խորանում է 4.78%-ով, իսկ նվազման (արժեզրկման) դեպքում տեղի է ունենում առևտրային հաշվեկշռի պակասուրդի նույն չափով նվազում:

Հաշվի առնելով, որ արտահանման մեծ բաժինը և որակական մասը ապահովում են այնպիսի ապրանքախմբեր, ինչպիսիք են հանքահումքային արտադրանքը, պատրաստի սննդի արտադրանքը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները, ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը, մոդելները մշակվել են հենց այդ ապրանքախմբերի վրա իրական փոխարժեքի՝ որպես գնային գործոնի ազդեցության չափը գնահատելու նպատակով<sup>8</sup>:

Հանքահումքային արտադրանքի արտահանման մոդելի գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ հավասարումը.

<sup>7</sup> Վերլուծության համար հիմք են հանդիսացել վճարային հաշվեկշռի առանձին հաշիվների և իրական արդյունավետ փոխարժեքի 1997–2014 թթ. եռամսյակային տվյալները: Տվյալների շարքերը լոգարիթմվել են, հարթեցվել, շարքերից հանվել է սեզոնայնության գործոնը: Հաշվարկները կատարվել են **Eviews 7** ծրագրային փաթեթի օգնությամբ: (TRADE՝ առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճի ինդեքս):

<sup>8</sup> Մոդելների մշակումն իրականացվել է առանձին բազմաչափ ռեգրեսիոն հավասարումների կառուցման միջոցով՝ կիրառելով փոքրագույն քառակուսիների մեթոդը, իսկ ռեգրեսիաների որակի գնահատման համար հիմք են հանդիսացել հայտնի վիճակագրական բաշխումների արժեքները և կանխատեսման սխալների մեծությունը: Գնահատված պարամետրերի վիճակագրական նշանակալիությունը ստուգելու համար որպես հիմք են ծառայել R դետերմինացիայի գործակիցը, ռեգրեսիայի ստանդարտ սխալը, AKAIKE և SCHWARZ տեղեկատվական չափանիշները: Մոդելների տվյալների բազայի կառուցման համար ընտրվել են համապատասխան ցուցանիշների 1997–2014 թթ. եռամսյակային տվյալները: Տվյալների մեծ մասը լոգարիթմվել է և, անհրաժեշտության դեպքում, սեզոնայնորեն հարթեցվել, ստացիոնարության խնդիրը լուծելու նպատակով որոշ ցուցանիշներ նաև դիֆերենցվել են:

$$EXP\_MINERAL\_PROD = 0.63*EXP\_MINERAL\_PROD(-1) + 0.3*IND\_MINING(-1) - 2.55*D\_REER(-1) + 0.16^9$$

| Dependent Variable: LEXP_MINERAL_PROD_SA |             |                       |             |          |
|------------------------------------------|-------------|-----------------------|-------------|----------|
| Variable                                 | Coefficient | Std. Error            | t-Statistic | Prob.    |
| LEXP_MINERAL_PROD_SA(-1)                 | 0.633096    | 0.102970              | 6.148373    | 0.0000   |
| D_LREER_SA(-1)                           | -2.552790   | 1.093002              | -2.335576   | 0.0238   |
| LIND_MINING_SA(-1)                       | 0.304846    | 0.086149              | 3.538595    | 0.0009   |
| C                                        | 0.157705    | 0.253494              | 0.622124    | 0.5369   |
| R-squared                                | 0.915577    | Mean dependent var    |             | 5.794835 |
| Adjusted R-squared                       | 0.910188    | S.D. dependent var    |             | 0.846955 |
| S.E. of regression                       | 0.253821    | Akaike info criterion |             | 0.170806 |
| Sum squared resid                        | 3.027968    | Schwarz criterion     |             | 0.322322 |
| Log likelihood                           | -0.355551   | Hannan-Quinn criter.  |             | 0.228705 |
| F-statistic                              | 169.9069    | Durbin-Watson stat    |             | 2.291452 |
| Prob(F-statistic)                        | 0.000000    |                       |             |          |

Սողելի արդյունքները փաստում են, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով ավելացումը մեկ եռամսյակ անց հանգեցնում է հանքահումքային արտադրանքի արտահանման 2.55%-ային կետով նվազման, հանքահումքային արդյունաբերության ավելացված արժեքի և հանքահումքային արտադրանքի արտահանման 1%-ային կետով աճը մեկ եռամսյակ անց հանգեցնում է հանքահումքային արտադրանքի արտահանման՝ համապատասխանաբար 0.3%-ային կետով և 0.63%-ային կետով աճի:

Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման մողելի գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ հավասարումը.

$$EXP\_PREP\_FOOD = -1.01*REER(-1) + 1.38*IND\_MANUFACTURING(-1) + 0.53*D122 + 3.37^{10}$$

| Dependent Variable: LEXP_PREP_FOOD_SA |             |            |             |        |
|---------------------------------------|-------------|------------|-------------|--------|
| Variable                              | Coefficient | Std. Error | t-Statistic | Prob.  |
| LREER_SA(-1)                          | -1.008504   | 0.374996   | -2.689370   | 0.0099 |
| LIND_MANUFACTURING_SA(-1)             | 1.383556    | 0.105017   | 13.17458    | 0.0000 |
| D122                                  | 0.527214    | 0.237301   | 2.221711    | 0.0312 |
| C                                     | 3.369415    | 1.468910   | 2.293821    | 0.0263 |

<sup>9</sup> EXP\_MINERAL\_PROD՝ հանքահումքային արտադրանքի արտահանման աճի ինդեքս, IND\_MINING՝ հանքահումքային արդյունաբերության ավելացված արժեքի աճի ինդեքս, D\_REER՝ իրական արդյունավետ փոխարժեքի աճ ինդեքսի դիֆերենցիալ. բոլոր մողելներում իրական արդյունավետ փոխարժեքի աճը նշանակում է արժևորում, D\_FOREIGN\_DEMAND՝ արտաքին պահանջարկի աճի ինդեքսի դիֆերենցիալ, (-1)՝ լագ (համապատասխան ցուցանիշի նախորդ եռամսյակի արժեք):

<sup>10</sup> EXP\_PREP\_FOOD՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանման աճի ինդեքս, REER՝ իրական արդյունավետ փոխարժեքի աճի ինդեքս, IND\_MANUFACTURING՝ վերամշակող արդյունաբերության ավելացված արժեքի աճի ինդեքս, D122՝ ժամանակավոր շոկ:

|                    |          |                       |           |
|--------------------|----------|-----------------------|-----------|
| R-squared          | 0.850610 | Mean dependent var    | 5.841695  |
| Adjusted R-squared | 0.841075 | S.D. dependent var    | 0.581468  |
| S.E. of regression | 0.231805 | Akaike info criterion | -0.010657 |
| Sum squared resid  | 2.525475 | Schwarz criterion     | 0.140859  |
| Log likelihood     | 4.271744 | Hannan-Quinn criter.  | 0.047242  |
| F-statistic        | 89.20432 | Durbin-Watson stat    | 1.158141  |
| Prob(F-statistic)  | 0.000000 |                       |           |

Մոդելի արդյունքները փաստում են, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով արժևորումը մեկ եռամսյակ անց հանգեցնում է պատրաստի սննդի արտադրանքի արտահանման 1.18%-ային կետով նվազման, վերամշակող արդյունաբերության ավելացված արժեքի 1%-ային կետով աճը երկու եռամսյակ անց նպաստում է պատրաստի սննդի արտադրանքի արտահանման 1.38%-ային կետով աճին:

Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու մետաղների արտահանման մոդելի գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ հավասարումը.

$$\text{EXP\_PREC\_METAL} = 0.55 \cdot \text{EXP\_PREC\_METAL}(-1) - 1.85 \cdot \text{REER}(-1) + 0.24 \cdot \text{IND\_MANUFACTURING}(-1) + 9.9^{11}$$

| Dependent Variable: LEXP_PREC_METAL_SA |             |                       |             |        |
|----------------------------------------|-------------|-----------------------|-------------|--------|
| Variable                               | Coefficient | Std. Error            | t-Statistic | Prob.  |
| LEXP_PREC_METAL_SA(-1)                 | 0.548415    | 0.101808              | 5.386753    | 0.0000 |
| LREER_SA(-1)                           | -1.855625   | 0.497445              | -3.730308   | 0.0005 |
| LIND_MANUFACTURING_SA(-1)              | 0.236620    | 0.107593              | 2.199220    | 0.0327 |
| C                                      | 9.886888    | 2.355400              | 4.197541    | 0.0001 |
| R-squared                              | 0.823269    | Mean dependent var    | 5.088872    |        |
| Adjusted R-squared                     | 0.812223    | S.D. dependent var    | 0.417693    |        |
| S.E. of regression                     | 0.181000    | Akaike info criterion | -0.506837   |        |
| Sum squared resid                      | 1.572526    | Schwarz criterion     | -0.356741   |        |
| Log likelihood                         | 17.17776    | Hannan-Quinn criter.  | -0.449294   |        |
| F-statistic                            | 74.53292    | Durbin-Watson stat    | 1.894345    |        |
| Prob(F-statistic)                      | 0.000000    |                       |             |        |

Ստացված կախվածությունները ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով արժևորումը մեկ եռամսյակ անց հանգեցնում է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու մետաղների արտադրանքի արտահանման 1.85%-ային կետով նվազման, վերամշակող արդյունաբերության ավելացված արժեքի և

<sup>11</sup> EXP\_PREC\_METAL՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների արտադրանքի արտահանման աճի ինդեքս:

նույն ապրանքախմբի արտահանման 1% աճը մեկ եռամսյակ անց նպաստում է դիտարկվող ապրանքախմբի արտահանման՝ համապատասխանաբար 0.24% և 0.55%-ային կետով աճին:

Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման մոդելի գնահատման արդյունքում ստացվել են հետևյալ արդյունքները.

$$\text{EXP\_BASE\_METAL} = 0.69 \cdot \text{EXP\_BASE\_METAL}(-1) - 0.34 \cdot \text{REER}(-3) + 0.25 \cdot \text{IND\_MINING}(-1) + 1.9^{12}$$

| Dependent Variable: LEXP_BASE_METAL_SA |             |                       |             |           |
|----------------------------------------|-------------|-----------------------|-------------|-----------|
| Variable                               | Coefficient | Std. Error            | t-Statistic | Prob.     |
| LEXP_BASE_METAL_SA(-1)                 | 0.691358    | 0.107476              | 6.432690    | 0.0000    |
| LREER_SA(-3)                           | -0.337751   | 0.215970              | -1.563874   | 0.1247    |
| LIND_MINING_SA(-1)                     | 0.249221    | 0.090357              | 2.758180    | 0.0083    |
| C                                      | 1.861344    | 0.965463              | 1.927930    | 0.0601    |
| R-squared                              | 0.962639    | Mean dependent var    |             | 6.049807  |
| Adjusted R-squared                     | 0.960202    | S.D. dependent var    |             | 0.829010  |
| S.E. of regression                     | 0.165382    | Akaike info criterion |             | -0.684495 |
| Sum squared resid                      | 1.258161    | Schwarz criterion     |             | -0.531533 |
| Log likelihood                         | 21.11237    | Hannan-Quinn criter.  |             | -0.626246 |
| F-statistic                            | 395.0752    | Durbin-Watson stat    |             | 2.025442  |
| Prob(F-statistic)                      | 0.000000    |                       |             |           |

Ստացված արդյունքները վկայում են, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով արժևորումը երեք եռամսյակ անց հանգեցնում է ոչ թանկարժեք մետաղների արտահանման 0.34%-ային կետով նվազման, ոչ թանկարժեք մետաղների արտահանման 1%-ային կետով աճը մեկ եռամսյակ անց հանգեցնում է նույն ապրանքախմբի արտահանման՝ 0.69%-ային կետով, իսկ հանքահումքային արդյունաբերության ավելացված արժեքի 1%-ային կետով աճը մեկ եռամսյակ անց՝ 0.25%-ային կետով աճի:

Ստացված գործակիցների նշանները բավարարում են տնտեսագիտության տեսության պահանջները, և մոդելների արդյունքներից ակնհայտ է ստացված կապերի՝ տնտեսագիտորեն հիմնավորված լինելը: Մշակված մոդելները կարելի է օգտագործել որպես համապատասխան ցուցանիշների կանխատեսման կարևոր և որակյալ գործիքներ:

Այսպիսով՝ իրական փոխարժեքն այն հիմնարար և առանցքային փոփոխականն է, որն անմիջական և նշանակալի ազդեցություն է ունենում համաշխարհային շուկայում ՀՀ տնտեսության մրցունակության վրա, ուստի արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորման կարևոր գործիք է:

<sup>12</sup> EXP\_BASE\_METAL՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման աճի ինդեքս:

**ЛУСИНЕ МХИТАРЯН**

Аспирант кафедры "Макроэкономики" АГЭУ

**Реальный обменный курс и изменения структуры экспорта и импорта РА.**– В статье проанализированы внешнеторговая товарная структура, структура экспорта и импорта РА по странам. Для более полного анализа торгового баланса, рассчитаны квоты импорта и экспорта, их среднее квадратное отклонения, коэффициент неуравновешенности и симметричности структуры внешней торговли, удельный вес текущего счета в ВВП.

Учитывая, что удельный вес и качество экспорта обеспечивают некоторые товары, оценено влияние реального обменного курса как ценовой фактор на эти товары.

**Ключевые слова:** реальный обменный курс, реальный эффективный обменный курс, структура экспорта, структура импорта, счет по товарам, счет по услугам.

**LUSINE MKHITARYAN**

Post-graduate at the Chair of  
"Macroeconomics" at ASUE

**The Real Exchange Rate and Changes in Export and Import Structure of the Republic of Armenia.**– The article analyzes the foreign trade commodity structure, the structure of export and import of Armenia. For a more complete analysis of the balance of trade, import and export quotas, their mean square deviation, coefficient of imbalance symmetry and structure of foreign trade, the share of current account in GDP have been calculated.

Taking into consideration that the quality and most of the export is provided with some group of products, the impact of the real exchange rate is estimated as the price factor on these products.

**Key Words:** real exchange rate, real effective exchange rate, export structure, import structure, account on commodities, account on services.